ՀՏԴ 902/2-9(479.243) *Պատմություն*

Համլետ Պետրոսյան
Երևանի պետական համալսարան

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՆ ՈՒ ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ[1]

Արցախի Տիգրանակերտի պեղումների ժամանակ 2013-2014 թվականներին քաղաքի վաղքրիստոնեական տարածքում երկրորդ եկեղեցու զոհասեղանի տակ հայտնաբերվեց կամարակապ դամբարան-վկայարան՝շարված հղկված քարերով, մուտքով մի այնդեպի արևելյան կողմը: Նման արևելյան մուտքով վկայարան Արցախում հայտնի է Վաճառիս. Ստեփանոսի գերեզմանը: Ինչպեսպ արզվեցմեր պեղումների ընթացքում, արևելյան մուտք ունի նաև ս.Գրիգորիսի գերեզմանոց – վկայարանը Ամարասում: Այսբոլոր շինությունները վերագրվումեն 5-6-րդ դարերին:

Միակ գերեզմանոցը արևելյան մուտքով վաղ քրիստոնեական Արևելքում հայտնի է Երուսաղեմում Հիսուս Քրիստոսի գերեզմանը:

Վաչագան Բարեպաշտի վերաբերյալ վկայությունների վերլուծությունը թույլ է տալի սեզրակացնել, որ 5-րդ դարիվերջին Աղվանաց թագավորը (որի կազմի մեջ էին մտնում 5-րդ դարիկեսերից նաև Մեծ Հայքի արևելյան նահանգները՝ Արցախն ու Ուտիքը) Վաչագան Բարեպաշտը նախաձեռնել էր եկեղեցական բարեփոխումներ՝ փորձելով Աղվանից եկեղեցու գոյությունը կապել Երուսաղեմի հետ: Այս բարեփոխման դրսևորումներից մեկը եղավ առաքյալ Եղիշեի մասինլեգենդը, ով Երուսաղեմից եկել էր Ալբանիա: Հնագիտական, ճարտարապետական նգրավորվկայությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս բոլոր երեք գերեզմանոցները արևելյան մուտքով Վաչագան Բարեպաշտի բարեփոխումների գործունեության արդյունքն են, և դրանց արևելյան մուտքը, հավանաբար,Երուսաղեմում Հիսուս Քրիստոսի գերեզմանի օրինակով էր կառուցված:

Բանալի բառեր՝ Արցախի Տիգրանակերտ, Ամարաս, Վաչագան Բարեպաշտ, դամբարան, Աղվանից եկեղեցի, սրբեր, գաղափարաբանություն, արևելյանմուտք, ծես:

Гамлет Петросян
Ереванский государственный университет

АРЦАХСКИЙ ТИГРАНАКЕРТ И РЕЛИГИОЗНЫЕ РЕФОРМЫ ВАЧАГАНА БЛАГОЧЕСТИВОГО

Во время раскопок Арцахского Тигранакерта в 2013-2014 гг. на Раннехристианской площади города под алтарем второй церкви был обнаружен сводчатый усыпальница-мартириум, выложенный чистоотесаными камнями, с единственным восточным входом. С подобным единичным восточным входом известна еще один склеп в Арцахе – усыпальница святого Степаноса в Вачаре. Как выяснилось нашими раскопками, восточный вход имеется и у склепа-мартириума Св. Григориса в Амарасе. Все эти три строения относятся ко времени V-VI вв. Единственная усыпальница с восточным входом известная на раннехристианском Востокае – это Гроб Господень в Иерусалиме.

Анализ сведений, касаюшихся Вачагана Благочестивого, позволяет заключить, что в конце V века царь Албании (в состав которой начиная с половины 5-го века входили и восточные провинции Великой Армении - Арацах и Утик) Вачаган Благочестивый, придпринял церковную реформу, пытаясь связать происхождение Албанской церкви с Иерусалимом. Одним из проявлений данной реформы явилось создание легенды об апостоле Егиша, прибывшего в Албанию из Иерусалима. Сопоставительный анализ археологических, архитектурных и письменных данных приводит к выводу о том, что все три усыпальницы с восточным входом являются результатом реформистской деятельности Вачагана Благочестивого, и их восточный вход, вероятнее всего, был заимствован из усыпальницы Гроба Господня в Иерусалиме.

Ключевые слова- Арцахский Тигранакерт,Амарас,Вачаган Благочестивый,мавзолей,Агванскаяцерковь,святые,идеология,восточный доступ,обряд

Hamlet Petrosyan
Yerevan State University

TIGRANAKERT OF ARTSAKH AND THE RELIGIOUS REFORMS OF VACHAGAN THE PIOUS

The excavations in Tigranakert of Artsakh in 2013-2014 opened the vaulted tomb-chapel of hewn stones. It was opened under the stage of the second church of early Christian Square. It has only the eastern entrance. Only eastern entrance has also St. Stephen's mausoleum in Vachar. The excavations show that having only eastern entrance is typical also to St. Grigoris funerary chapel in Amaras. All these three structures are related to 5-6th centuries. In early Christian East the tomb has only one, eastern entrance: it is Holly Sepulchre in Jerusalem.

Analysis of the data on Vachagan the Pious, allows us to conclude that at the end of V century king of Albania (which included since the middle of 5th century the eastern provinces of Greater Armenia – Artsakh and Utik) initaeted the church reform, trying to link the origin of the Albanian church of Jerusalem. One of the manifestations of this reform was the creation of

[1] Լուսանկարները Համլետ Պետրոսյանի և Հրայր Բազեի (նկ. 2), չափագրությունները Լ. Կիրակոսյանի և Լ. Մինասյանի (նկ. 9):

the legend of the Apostle Yeghishe, arrived in Albania from Jerusalem. Comparative analysis of archaeological, architectural and written data leads to the conclusion that all three tombs to the east entrance are the result of the reformist activity of Vachagan the Pious, and the eastern entrance, most likely, was taken from the tomb of the Holy Sepulchre in Jerusalem.

Key words - Tigranakert Of Artsakh, Amaras,Vachaghan Barepasht, mausoleum, The Aghvan Church, the Saints, ideology,eastern access,rite

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը 2005թ. վավերացրել է Հայոց արքա Տիգրան Բ Մեծի (95-55թթ. մ.թ.ա.) կողմից Արցախում հիմնած Տիգրանակերտ քաղաքի մնացորդները և 2006թ. ի վեր ընդարձակ հնագիտական պեղումներ է իրականացնում նրա տարածքում: Հուշարձանը գտնվում է ԼՂՀ Ասկերանի շրջանում, Խաչենագետի աջ ափին: Այն տարածվում է Վանքասար լեռան հարավ-արևելյան ներքնալանջի վրա և այդ լանջին կից գոգավորությունում՝ Արքայական աղբյուրների (Շահբուլաղ) հարևանությամբ:

Պեղումներով բացվել են քաղաքի անտիկ Ամրացված թաղամասի Միջնաբերդի վերին հատվածը, Միջնաբերդը թաղամասից բաժանող 83մ երկարություն ունեցող պարիսպ-հենապատը, նույն թաղամասի հարավային պարիսպների մոտ 450մ ձգվող ժայռափոր հիմքերը, հյուսիսային պարիսպների մինչև 5մ բարձրություն ունեցող և մոտ 290 մ ձգվող հատվածը, հարավային պարսպի նորահայտ մոտ 40 մ հատվածը, Կենտրոնական թաղամասի վաղքրիստոնեական Հրապարակը (նկ. 1, 2)՝ զույգ եկեղեցիներով, խաչակիր մոնումենտալ կոթողի մնացորդներով, վաղքրիստոնեական դամբարանով և տապանաբակով հանդերձ: Հայտնաբերվել և պեղվել են քաղաքի Անտիկ առաջին թաղամասը, Ժայռափոր հնձանը, Վաղքրիստոնեական դամբարանադաշտի մի հատվածը, Արքայական աղբյուրներին կից ջրավազանը: Մասնակիորեն պեղվել են անտիկ կարասային դամբարանադաշտերից մեկը (Արևելյան դամբարանադաշտ), 19-րդ դարում կառուցված Փոստային կայանի մնացորդները, Տիգրանակերտի մերձակայքում գտնվող ժայռափոր պաշտամունքային համալիրն ու ժայռափոր ջրանցքը, հետազոտվել են շրջակայքի մարդակերպ կոթողները, Գյավուրկալա վաղմիջնադարյան բնակատեղին: Հատուկ պիտի նշել, որ հետազոտության ֆինանսավորումն ապահովում են ԼՂՀ իշխանությունները: Կարելի է հավաստել, որ արդյունքում Տիգրանակերտն այսօր տարածաշրջանի ամենադիտարժան հնագիտական հուշարձանն է և Արցախի անկախության գիտական և մշակութային էական նվաճումներից մեկը:

Մոտ 70 հա զբաղեցնող քաղաքի և նրա շրջակայքի հնագիտական հետազոտությունը բացառիկ հնարավորություններ է ստեղծում գիտական շրջանառության մեջ դնել մինչ այժմ ուղղակի անհայտ իրողություններ և փաստեր, հաճախ էլ նորովի քննել արդեն բազմիցս քննված ու փակուղի մտած գիտական խնդիրներ: Դրանցից մեկն էլ, որին նվիրված է սույն քննությունը, Աղվանից արքա Վաչագան բարեպաշտի (մ.թ. 5-րդ դարի վերջ – 6-րդ դարի սկիզբ) կրոնական ռեֆորմն է, որը հայտնի չափով մնացել է էապես չհասկացված և որպես կանոն դիտվել բարի արքայի մասին սենտիմենտալ-վերացարկված վիպասանություն: Մեր հիմնական եզրակացությունն այն է, որ նորագյուտ հնագիտական իրողությունների քննությունը հնարավորություն է տալիս Վաչագանի կրոնական ռեֆորմը համարել դարակազմիկ մի գործընթաց, որն ընկավ Աղվանից եկեղեցու ծագումնաբանական, գաղափարական և ծիսական առանձնակի կերպարի հիմքում, ինչն էլ պայմանավորեց այդ եկեղեցու հետագա ինքնուրույնությունը և հայտնի առանձնացվածությունը հայ առաքելական եկեղեցուց, չնայած այս եկեղեցու լեզվի ու հայտնի չափով հավատացյալ հոտի հայկականությանը: Կարծում եմ մենք այսօր կարիք ունենք պատմա-մշակութային իրողությունների ավելի ճշգրիտ ընկալման ու ձևակերպման, և Տիգրանակերտի հետազոտությունն այս հարցում կարող է նաև մեթոդաբանական արժեք ունենալ:

Արցախի Տիգրանակերտի մասին գրավոր տեղեկությունները բավականին սուղ են, բայց ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ դրանց հիմնական մասը վերաբերում է հենց վաղքրիստոնեական ժամանակաշրջանին: Գրավոր աղբյուրները, թեև սակավաթիվ, բայց կարծես շեշտում են Տիգրանակերտի էական ռազմական և վարչական-եկեղեցական դերակատարումը:

Արցախի Տիգրանակերտի մասին առաջին հիշատակությունը պատկանում է 7-րդ դարի հայ պատմիչ Սեբեոսին: Բյուզանդիայի կայսր Հերակլի 622-624 թթ. պարսկական արշավանքները նկարագրելիս, պատմիչը գրում է, որ այդ պատերազմի դրվագներից մեկում բյուզանդական կայսրն իրեն հետապնդող պարսիկներից խույս տալու նպատակով փորձում է Ատրպատականից անցնել Աղվանք (տվյալ դեպքում՝ Արցախ և Ուտիք, որոնք մոտավորապես 5-րդ դարի կեսերից Սասանյան արքունիքի կողմից միացվել էին Աղվանքին), սակայն պարսկական մի զորաբանակ Գարդմանի կողմից դեպի հարթավայր իջնելով՝ կտրում է նրա ճանապարհը մյուս Տիգրանակերտի մոտ: Կայսրը փորձում է ետ դառնալ, բայց այս անգամ էլ նրան հանդիման դուրս է գալիս պարսկական մեկ այլ զորախումբ՝ արդեն Տիգրանակերտ ավանի մոտ: Բյուզանդական բանակը պարտության է մատնում այս վերջին զորախումբը և Ծղուկով անցնում Նախճավան («[Հերակլը] գայ հասանէ ի Փայտակարան: Ազդ եղև Խոսրովու, եթէ դարձաւ Երակլոս և եհաս ի Փայտակարան և կամի ընդ Աղուանս անցանիլ ի Վիրս. հրաման ետ զաւրավարի իւրոյ Շահր Վարազոյ, զի զառաջն կալցի: Եւ նա փութով հասանէ յԱյրարատ, և անցանէ ի Գարդման ընդդէմ նորա, և բանակի ի միւս Տիգրանակերտի յանդիման նորա: Եւ Շահէնն ԼՌ-աւ հասեալ բանակեցաւ ի թիկանց Երակլի ի Տիգրանակերտ աւանի: Եւ էին սոքա աստի, և նոքա անտի բանակեալ: Եւ բանակն Երակլի ի մէջ նոցա երկոցունց:

Իբր ետես Երակլոս, եթե ի մէջ արկին զնա՝ դարձաւ ի վերայ զաւրուն՝ որ ի թիկանց կողմանէ, հապճեպ զաւրութեամբ եհար զնա և խորտակեաց և գնաց ընդ Ծղուկս, և թափեցաւ ընդ լեռնակողմն ի դաշտն Նախճաւանի ի ձմերան ժամանակի», Պատմութիւն Սեբէոսի /Աշխ. Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 125):

Սեբեոսի վկայությունից արվող ամենաանմիջական եզրակացությունն այն է, որ 7-րդ դարի սկզբներին Արցախում և Ուտիքում կային Տիգրանակերտ անունով երկու բնակավայրեր, որոնցից «միւս Տիգրանակերտը» գտնվում էր հյուսիսում, իսկ «Տիգրանակերտ աւանը»՝ հարավում: Ավելի քան հավանական է, որ հեղինակը Տիգրանակերտերից մեկը «միւս» է կոչում՝ այն Տիգրանակերտ ավանից տարբերելու համար: Ինչ վերաբերում է «աւան» տերմինին, Սեբեոսի մոտ այն որպես կանոն օգտագործվում է նշանակելու ամրացված բնակավայրը՝ որը մի դեպքում կարող է լինել շուրջանակի պարսպապատված, իսկ մի այլ դեպքում՝ ամրոցին կից կամ նրա շուրջ փռված (Պետրոսյան Հ., Գառնին 9-14-րդ դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 116-121): Եթե նկատի ունենանք, որ կայսեր բանակը շտապ Վիրք հասնելու համար պիտի գնար բանուկ ճանապարհով, ապա ավելի քան հավանական է, որ Տիգրանակերտերը գտնվել են Արցախյան լեռների ու Ուտիքի հարթավայրի ձուլման եզրով դեպի հյուսիս գնացող ճանապարհից ոչ այնքան հեռու կամ նույնիսկ նրա անմիջական մերձակայքում:

Ըստ 10-րդ դարի պատմիչ Մովսես Դասխուրանցու «Պատմություն Աղվանից աշխարհի» հավաքական աշխատության այն մասի, որը վերագրվում է Հերակլի արշավանքների ժամանակ ապրած, ծագումով՝ Տիգրանակերտից ոչ հեռու գտնվող Կաղանկատույք գյուղից պատմիչին (որից էլ Դասխուրանցու երկը հայագիտության մեջ սկզբնապես հայտնի է դարձել որպես Մովսես Կաղանկատվացու աշխատություն), Հերակլի բանակը դեպի Տփղիս իր ճանապարհին սկզբում դադար էր առել Տրտու (այժմ՝ Թարթառ) գետից հարավ ձգվող հեղեղատի ափին՝ Կաղանկատույք գյուղի մոտ, ապա հենց Տրտուի հեղեղատին կից՝ Դյուտական գյուղի մոտ (Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի /քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1983, էջ 132-133, այսուհետ՝ Կաղանկատուացի): Կաղանկատվացու այս և դրան հաջորդած խազարների արշավանքի՝ Պարտավի մոտ սփռվելու նկարագրության մանրամասների (Կաղանկատուացի, էջ 136-137, 159) համադիր քննությունը պարզում է, որ Սեբեոսի հիշատակած Տիգրանակերտերից հարավայինը՝ Տիգրանակերտ ավանը, գտնվում էր Թարթառից հարավ, Պարտավից ոչ այնքան հեռու, այնտեղ, ուր Արցախյան լեռներն ավարտվում են և սկսվում է Ուտիքի տափաստանային հատվածը: Թեև Կաղանկատվացին իր պատմության այդ հատվածներում որևէ Տիգրանակերտ չի հիշատակում, սակայն 8-րդ դարի սկզբներին Հայոց Եղիա կաթողիկոսի Պարտավում հրավիրած ժողովի մասին Թղթում (Հակոբյան Ա., Եղիա Արճիշեցի կաթողիկոսի նորահայտ թուղթը, ՊԲՀ, 1981, թիվ 4, էջ 140-152), որը ներառված է և Դասխուրանցու Պատմության մեջ (Կաղանակատուացի, էջ 300-304), տեղեկություն կա այն մասին, որ այդ ժողովին ի շարս այլոց մասնակցում էին նաև Կաղանկատույքի վանական Դավիթը և Տկռակերտի (որոշ ձեռագրերում՝ ուղղակի Տիգրանակերտի) վանական (տվյալ դեպքում՝ քահանա) Պետրոսը: Նախ, կարելի է ենթադրել, որ Տկռակերտը Տիգրանակերտի տեղական արտասանությունն է, երկրորդ, հավանական է, որ այն այնքան էլ հեռու չէր Կաղանկատույքից (քանի որ հիշատակվում է նրանից անմիջապես հետո)՝ այսինքն, խոսքը նորից գնում է Տիգրանակերտ ավանի կամ Արցախի Տիգրանակերտի մասին: Այս ժամանակ Տիգրանակերտի՝ կարևոր բնակավայր լինելու հանգամանքը հավաստվում է նաև այն փաստով, որ հենց բնակավայրից մեկ ու կես կիլոմետր հեռու, Վանքասար լեռան գագաթին 7-րդ դարի վերջերին կառուցվել է խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցի, որը հայտնի սրբավայր էր առվանզն մինչև 18-րդ դարի կեսերը: Նույն Վանքասարի հյուսիսային գահավեժ ժայռի մեջ՝ Խաչենագետի ափին է տեղակայված և Արցախի հնագույն քրիստոնեական կենտրոններից մեկը՝ ժայռափոր-պաշտամունքային համալիրը՝ բաղկացած ժայռափոր եկեղեցուց, գավթից, տապանաբակից, հարդարված բազմաթիվ խաչային հոնրինվածներով, վիմագրված հունարեն և հայերեն արձանագրություններով (Петросян Г. Л., Киракосян Л. В. Раннехристианский культово-пещерный комплекс арцахского Тигранакерта. - Пещеры как объекты истории и культуры: материалы международного форума, Вороноеж - Дивногорье, 2016, с. 165-170): Ինչպես կտեսնենք ստորև, Տիգրանակերտի Կենտրոնական թաղամասի պեղումները երևան են բերել 5-6-րդ դարերում կառուցված՝ իր ժամանակի համար հսկայական չափերի, սրբատաշ ու քանդակազարդ քաղաքային եկեղեցու մնացորդները: Ավելի քան հավանական է, որ Պետրոսը հենց այս եկեղեցու քահանան էր: Հիշատակենք և Ամրացված թաղամասի պեղումների ժամանակ գտնված սասանյան կնքադրոշմները (4-6-րդ դարեր), որոնք վաղ միջնադարում քաղաքի վարչա-առևտրական գործունեությունը ցուցող կարևոր տվյալներ են: Փաստերն, այսպիսով, հավաստում են, որ Տիգրանակերտը վաղքրիստոնեական ժամանակաշրջանում հանդիսանում էր Պարտավի մերձակայքում տեղակայված խոշոր ռազմա-վարչական ու կրոնական կենտրոն:

Եվ բնական էր, որ հնագիտական հետազոտության առաջին իսկ քայլերից սկսած՝ Ամրացված թաղամասի պեղումներին զուգահեռ, արշավախումբը հատուկ ուշադրություն էր դարձնում քաղաքի միջնադարյան հետքերին: 2005 թ. տեղանքի հետազոտությամբ արդեն հստակ էր, որ միջանադարյան մշակույթի նյութական հետքերն առատորեն դիտելի են ուշմիջնադարյան ամրոցից դեպի հարավ-արևելք ձգվող մոտ յոթ հա զբաղեցնող, շրջապատից 4-6 մետր բարձրությամբ առանձնացող տափարակում: Ակնհայտ էր, որ գործ ունենք դարերի մշակութային գործունեության հետևանքով առաջացած արհեստական բարձունքի հետ: Պայմանականորեն մեր կողմից Կենտրոնական անվանված (քանի որ այն Ամրացված թաղամասի, վաղքրիստոնեական գերեզմանոցի, անտիկ թաղմասերի և ուշմիջնադարյան ամրոցի համեմատ միջակա դիրք է գրավում՝ ասեք շրջապատված է նրանցով) այս թաղամասի ողջ տարածքում նկատելի էին քարաշեն կառույցների, ճարտարապետական զանազան բեկորների, թոնիրների, հորերի, հարյուրների հասնող հասարակ և ջնարակապատ խեցեղենի կտորտանքներ: Թաղամասի կենտրոնական հատվածում մինչև պեղումները նկատելի էին քարուկիր պատերի մեծ զանգվածներ՝ ընկած արևմուտքից արևելք ձգվող ընդարձակ փոսորակի արևելյան և արևմտյան կողմերում: Նկատի ունենալով, որ Տիգրանակերտի տարածքը 19-րդ դարի վերջին նկարագրած Մակար Բարխուդարյանցը խոսում է հենց Տիգրանակերտի տարածքում ընդարձակ եկեղեցու ավերակների մասին («Գաւառիս վերնամասումն է Տիգրանակերտ աւանն, որ աւերակ է այժմ: Բայց հարկ է յայտնել որ ընդարձակ գիւղաքաղաք եղած է այս և երբեմն

առաջնորդանիստ և գաւառագլուխ. տակաւին մնում է ընդարձակ եկեղեցու աւերակն, շուկայի և տների և բաղանիսների կիսաւեր քարուկիր շինութիւններն ևն», Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 20), մենք ենթադրեցինք, որ արևմուտքից արևելք ձգվող փոսորակը կարող է հենց նրա հիշատակած եկեղեցու մնացորդը լինել:

2006 թ. փոսորակի այն հատվածում, որը մոտավորապես կարող էր համապատասխանել կառույցի աբսիդի և աղոթասրահի ներքին անկյանը (այդ անկյունը եկեղեցական կառույցի ամենամուր հանգույցներից է և որպես կանոն ավելի լավ պահպանվում)՝ 5 մետրը 5-ի վրա մի քառակուսի առանձնացրեցինք ու սկսեցինք պեղումները: Ընդամենը մի քանի ժամ անց մոտ 0,5 մ խորության վրա բացվեցին եկեղեցու աբսիդի և կից հարավային պատի առաջին սրբատաշ քարերը: 2006-2009 թթ պեղումների արդյունքում մակերեսից մոտ 3,5 մետր խորության վրա բացվեցին վաղքրիստոնեական մի ընդարձակ տաճարի ավերակները (պեղումներն իրականացրել են Հ. Պետրոսյանը, Ա. Ժամկոչյանը, Վ. Սաֆարյանը):

Եկեղեցին իր ծավալատարածական հորինվածքով պատկանում է 4-6-րդ դարերում Հայաստանում և Կովկասում տարածված միանավ բազիլիկաների տիպին (նկ. 1, 2, 3): Այն իր չափերով, ճարատարապետական հորինվածքով ու հարդարանքով Արևելյան Կովկասի ամենավաղ, ամենաընդարձակ և գեղազարդ միանավ սրահն է: Տաճարի պեղածո մնացորդները և պեղումների ընթացքում վավերացված փաստերը հնարավորություն են տալիս համարյա ամբողջովին վերականգնել կառույցի ծավալա-տարածական նախնական լուծումն ու կրած փոփոխությունները, պարզաբանել շինարարական տեխնիկան, հարդարանքի հիմնական նկարագիրը: Սկզբնապես այն եղել է արտաքուստ հնգանիստ աբսիդով միանավ սրահ: Հետագայում հնգանիստ ծավալը ներառվել է ուղղանկյուն ծավալի մեջ, հավելվել է հարավային ավանդատունը, որը մուտք է ունեցել դրսից: Պեղումները ավանդատանը հարավից կից բակում երևան են բերել փողրակներով ու կղմինդրներով պատրաստված ջրագիծ: Սա բավարար հիմք է ենթադրելու, որ հարավային ավանդատունը կառուցվել է որպես մկրտարան, և ջրագիծն էլ ապահովել է մկրտարանի ջրահեռացումը: Ըստ երևույթին ավանդատան կառուցումից հետո հավելվել է և հարավային բացօթյա սյունասրահը: Կարծում ենք նիստավոր աբսիդն ուղղանկյուն ծավալի մեջ ներառելու պահանջը պայմանավորված էր հենց հարավից նոր սենյակի հավելումով:

Այս փոփոխությունների և հավելումների արդունքում եկեղեցու ներքնատեսքը մնացել է նույնը: Խիստ ձգված ուղղանկյուն կանոնավոր սալապատ սրահն արևելքում կիսաշրջան բեմից բացի ունի նաև 2,5 մ լայնությամբ դասի մաս, որն աղոթասրահի մակարդակից բարձր է 0,5 մ: Այն ամբողջությամբ սալապատված է. նրանից դեպի աղոթասրահ իջնում են երկու աստիճաններ: Եկեղեցու այս հատվածի պեղումներից գտնվել են նաև դասն աղոթասրահից բաժանող քարե ճաղաշարի սյուների մասեր: Վաղ եկեղեցիներում ավագ խորանի առջևում գտնվող տարածքը, այսպես կոչված դասը, որպես կանոն մի աստիճան բարձր է լինում հատակից և բաժանվում էր վանդակորմով: Այստեղ ժամերգությունների և պատարագների ժամանակ դաս-դաս կանգնում էին հոգևորականները և ձայնակցում միմյանց: Հավատացյալներն իրավունք չունեին այստեղ մուտք գործել և մտնում էին միայն սուրբ հաղորդություն ստանալու: Հարկ է նկատել, որ թեև դասի առկայությունը վաղ եկեղեցիներում միանգամայն ենթադրելի է, իրական ճարտարապետական կառույցում այն վավերացվում է առաջին անգամ:

Սրբատաշ խոշոր բլոկներով ու կրաշաղախով իրականացված, եռաստիճան գետնախարսխի վրա դրված եկեղեցին ունեցել է արևմտյան մեկ, հարավային ու հյուսիսային զույգ շքամուտքեր, ատամնազարդ քիվ, փայտածածկ ու կղմինդրապատ տանիք: Շքամուտքերն ունեցել են պատկից զույգ սյուներ, որոնք ավարտվել են մանրամասն հարդարված խոյակներով: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են ատամնազարդ քիվերի, պատկից սյուների բազմաթիվ օրինակներ, կղմինդրների հարյուրավոր բեկորներ և երկու խոյակներ: Խոյակներից մեկը ներկայացնում է խաչը լուսատուների, երկրորդը՝ խաչն այգային միջավայրում՝ վաղքրիստոնեության մեջ քաջ հայտնի թեմաները: Հատկապես ուշագրավ են երկրորդ խոյակի վրայի խաղողի որթերի (ճյուղերը, տերևները, բեխիկները, ողկույզները) բարձրաքանդակ ու ռեալիստական իրականացումը, ինչը բնորոշ է այս հորինվածքների ամենավաղ օրինակներին: Նախնական տվյալներով եկեղեցին 9-10-րդ դարերի սահմաններում ավերվել և հրդեհվել է, և նրա ավերակների վրա բնակելի համալիրներ են կառուցվել: Միայն մոտ մեկ դար անց հարավային ավանդատանը կից հատվածը նորից պաշտամունքային գործառույթ է ձեռք բերում, այստեղ խաչքար է կանգնեցվում, դեպի հյուսիս և արևմուտք թաղումներ են կատարվում:

Վաղքրիստոնեական նման մեծ բազիլիկայի առկայությունը կարևոր փաստարկ է հօգուտ այն իրողության, որ վաղմիջնադարում Տիգրանակերտը պահպանում էր հայկական նշանավոր բնակավայրի իր կարգավիճակը, և որ վաղմիջնադարյան հայ աղբյուրների (Սեբեոս, Կաղանկատվացի, Եղիա Արճիշեցի) վկայություններն Արցախի Տիգրանակերտի մասին լիովին համապատասխանում են պատմական իրականությանը:

Եկեղեցու վերը նշած ճարտարապետական առանձնահատկություններին կարելի է հավելել և հյուսիսային երկու մուտքերի առկայությունը: Եթե արևմտյան մուտքի առկայությունը միանգամայն օրինաչափ էր, և բնական էր թվում նաև հարավային զույգ մուտքերի առկայությունը, նկատի ունենալով եկեղեցու չափերը և հարավից կից կառույցների առկայությունը, ապա արտառոց էր հյուսիսային զույգ մուտքերի առկայությունը: Վաղքրիստոնեական տաճարաները որպես կանոն հյուսիսային մուտք չեն ունենում, միայն եզակի դեպքերում, երբ տեղանքի թելադրանքով անհնար էր արևմտյան կամ հարավային մոտքի բացումը՝ կարելի է հանդիպել հյուսիսիային մուտքի: Այս հանգամանքը հիմք էր տալիս ենթադրել, որ եկեղեցուն հյուսիսից հարող բակում ինչ-որ կարևոր կառույց (կամ կառույցներ) է եղել, որն էլ պայմանավորել է դեպի հյուսիս զույգ մուտքերի բացումը: Ուստի եկեղեցու և նրան անմիջապես հարող հարավային բակի բացումից հետո որոշեցինք պեղումները շարունակել դեպի հյուսիս: Ակնկալիքները լիովին արդարացվեցին, քանի որ պեղումներիը երևան բերեցին ընդարձակ սալահատակ մի բակ (նկ. 1, 2, 4)՝ վաղքրիստոնեական խաչակիր կոթողի (հիմնախարիսխը, պատվանդանը, սյան

ու թևավոր խաչի բեկորները), արտաքուստ ընդգծված աբսիդով բազիլիկայի (երկրորդ եկեղեցու), նրան արևմուտքից կից տապանաբակի, և արևելյան աբսիդի տակ գտնվող դամբարանի մնացորդներոն հանդերձ: Այս վերջինիս՝ վաղքրիստոնեական դամբարանի (նկ. 5, 6, 7) հնագիտական հետազոտությունն էլ հիմք դարձավ անդրադառնալ համանման արցախյան կառույցներին և Վաչագան Բարեպաշտի բարեփոխումներին:

Թեև եկեղեցուց (նկ. 1, 2. 4) պահպանվել են միայն որմնախարսխի սրբատաշ քարերը (այն էլ ոչ ամբողջովին) և անմշակ քարերով ու կրաբետոնով իրականացված հիմքերը, լրիվ ընթեռնելի են նրա հատակագիծը, ծավալային լուծումը և շինարվեստը: Այն երկաստիճան որմնախարսխի վրա դրված ուղղանկյուն հատակագծով, արտաքուստ շեշտված աբսիդով, արևմտյան և հարավային մուտքերով միանավ՝ բավականին անձուկ սրահ է (աղոթասրահի ներքին չափերը՝ 9,8 x 4,5 մետր, արտաքին չափերը՝ 16,3 x 8,3 մետր): Հատակը եղել է սրբատաշ սալերով պատված: Եկեղեցու հարավային բակը մոտ 5 մետր լայնությամբ պատված է կոպտատաշ անկանոն սալաքարերով՝ ըստ երևույթին հավասար հուշակոթողի գետնախարսխի լայնությանը: Դեպի հարավային մուտքն ուղղորդող սալահատակը շարված է ավելի մեծ քարերով, ընդ-որում, դրանցից մեկը մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբի մարդակերպ կոթող է: Այսպիսով, մենք գործ ունենք եկեղեցուց, նրան հարավից կից հուշակոթողի և հարավից կից սալահատակ բակով համալիրի հետ:

Դեռևս 2013 թ. պեղումների ժամանակ նորաբաց երկրորդ եկեղեցու արտաքուստ շեշտված աբսիդի արևելյան ծայրում բացվել է 4 խոշոր քարե բլոկներով պարփակված մի ուղղանկյուն տարածք, ուր մշակութային շերտը խորանում էր բնահողի մեջ (պեղումներն իրականացրել են Հ. Պետրոսյանն ու Տ. Վարդանեսովան, չափագրությունը՝ Լ. Գիրակոսյանը): Ուղղանկյանը հավասար դրված հորատի (1,95x1,50 մ) պեղումների արդյունքում, բակի մակարդակից 1,40 մ խորության վրա, բացվեց սալահատակ՝ կազմված երեք սրբատաշ քարերից: Սալաքարերի տակ վավերացվեց բնահողը: Ակնհայտ էր, որ գործ ունենք եկեղեցու աբսիդի տակ գտնվող ինչ-որ կառույցի մնացորդների հետ: 2014 թ. պեղումները դեպի արևմուտք բացեցին կառույցի հարավային և հյուսիսային պատերի հատվածները՝ շարված կրաքարե սրբատաշ բլոկներով, գլանաձև թաղի առանձին մասերը՝ նույնպես սրբատաշ քարերով: Հյուսիսային և հարավային պատերում բացվեցին նույնպես սրբատաշ բլոկներով իրականացված մեկական խորշեր: Ակնհայտ էր, որ գործ ունենք եկեղեցու աբսիդին ներկառուցված դամբարանի հետ (նկ. 5, 6, 7): Ինչպես պարզեցին հետագա պեղումները, ողջ կառույցն իրականացված է խոշոր սրբատաշ քարերով, ունի արևմուտք-արևելք հստակ կողմնորոշում, գլանաձև թաղ, միակ արևելյան մուտք: Հարավային և հյուսիսային պատերի մեջ ներկառուցված են ուղղանկյուն-զուգահեռանիստ ծավալով, արևելյան մասերում թեթևակի կլորացող խոռոչ-պատրհաններ, որոնք ամենայն հավանականությամբ նախատեսված են եղել սրբերի մասունքների համար:

Դամբարանի մաքրումը թույլ տվեց վերջնական և ամբողջական պատկերացում կազմել նրա կառուցվածքի և կառուցման հանգամանքների վերաբերյալ: Ի մասնավորի դամբարանին հարավից կից տարածքի պեղումները երևան բերեցին նաև նրա տանիքի մի հատվածը՝ պատված կրաշաղախե սվաղով: Այն թույլ տվեց եզրակացնել, որ դամբարանն արտաքինից ունեցել է մոտավոր երկթեք սվաղապատ ծածկ, որի վերին վերականգնվող ծայրակետը փոքր-ինչ բարձրացել է եկեղեցու հատակի մակերեսից և դրսից ներառվել է բեմատակի ծավալի մեջ: Երկրորդ կարևոր մանրամասը աբսիդի հարավային պատի՝ թաղին համապատասխանող մասի իրականացումն էր երկրորդական օգտագործման կոպտատաշ և սրբատաշ խոշոր բլոկներով, ինչը հնարավորություն տվեց հավաստել, որ թաղի վրա կողային ճնշումը թուլացնելու համար այն ներառվել էր յուրօրինակ պաշտպանիչ պատյանի մեջ: Սա կարևոր կռվան է՝ պնդելու, որ եկեղեցին կառուցվել է դամբարանի հետ միաժամանակ և դամբարանի վրա:

Երբ հորատն արդեն դամբարանի հատակի մակերևույթի համեմատ խորացվել էր 2,8 մ ու մշակութային շերտը դեռ շարունակվում էր, որոշվեց դադարեցնել պեղումները, քանի որ փլուզման սպառնալիք կար: Հորատից հանվեցին այնտեղ ընկած կվադրերը, և այն վերալցվեց հողով՝ մինչը հատակի նիշը:

Չնայած կրած ավերածություններին, դամբարանի քարերի մեծամասնությունը հայտնաբերվել է, և նրա վերականգնումը որևէ խնդիր չի հարուցում: Կարելի է փաստել որ այն Աղցքի արքայական դամբարանի և Ամարասի Գրիգորիսի դամբարանից հետո նման լավ պահպանված երրորդ կառույցն է վաղքրիստոնեական հայ մշակույթում: Պեղումների արդյունքները հնարավոր են դարձնում վավերացնել այս տիպի կառույցի մի նոր հորինվածք, որի հիմնական առանձնահատկությունը միակ արևելյան մուտքն է:

Դամբարանն ավերվել է 9-րդ դարի վերջերին՝ վաղքրիստոնեական հրապարակի կործանման ժամանակ, սակայն ավերակ վիճակում էլ շինությունը դարեր շարունակ եղել է հետաքրքրասերների և գանձախույզների փորփրումների առարկան, որի հետևանքով նախնական հատակը չի պահպանվել: Այսու՝ դիաթաղման հարցը մնում է առկախ:

2014թ. պեղումներից հետո հստակորեն կարելի է վերականգնել Տիգրանակերտի վաղքրիստոնեական հրապարակի գոյացման ընթացքը.

ա. սրբերի մասունքներով դամբարանի կառուցում,

բ. դամբարանը ներառող եկեղեցու կառուցում,

գ. հարավային սլահատակ բակի և հուշակոթողի կառուցում,

դ. տապանաբակի առաջացում առաջին կեղեցու արևմտյան բակում,

ե. քաղաքային մեծ եկեղեցու կառուցում առաջին եկեղեցուց հարավ:

Տիգրանակերտի դամբարանում միակ մուտքի արևելյան տեղադրությունը խիստ արտառոց է վաղքրիստոնեական դամբարանային և ավելի լայն՝ ընդհանրապես պաշտամունքային կառույցների համար: Քրիստոնեության փրկագործական հեռանկարի անմիջական կապն արևելքի հետ, որտեղից սպասվում է

Քրիստոսի երկրորդ գալուստը, պայմանավորում էր ինչպես հավատացյալի ծիսական շարժումն արևմուտքից դեպի արևելք, այնպես էլ սրբազան տարածքի, այդ թվում և սրբազան կառույցների կողմնորոշումը արևմուտքից դեպի արևելք (արևմուտք-արևելք ուղղվածություն և ձգվածություն, գլխավոր մուտքի տեղադրում արևմուտքում, արևելյան մուտքի բացառում, աբսիդ-բեմի տեղադրում արևելքում և այլն): Նույնիսկ մեր դամբարանում, որն ունի միակ արևելյան մուտք, դեպի արևելք «շարժումը» փաստվում է նիշաների կառուցվածքով, որոնց արևելյան մասերին տրվել է կլորացող լուծում: Տիգրանակերտի դամբարանի այս յուրահատկության պարզաբանման խնդիրը հիմք հանդիսացավ պեղումներ նախաձեռնել Արցախի ամենահայտնի վաղքրիստոնեական դամբարանային կառույցում՝ Ամարասի սուրբ Գրիգորիսի դամբարան-մատուռում (պեղումներն իրականացրել են Հ. Պետրոսյանը և Ն. Երանյանը, չափագրությունը՝ Լ. Կիրակոսյանը և Լ. Մինասյանը), որի հիմնական ծավալը գտնվում է ներկա եկեղեցու արևելյան խորանի տակ, և որը հարավային ու հյուսիսային մուտքերի հետ միասին, ըստ որոշ դիտարկումների, ունեցել է նաև արևելյան մուտք, որի հետքերը պետք էր փնտրել եկեղեցուց դուրս՝ նրա արևելյան պատին կից հատվածում: Իրոք՝ եկեղեցու արևելյան պատին կից ձեռնարկած պեղումները երևան բերեցին մատուռ-դամբարանի շարունակությունը՝ արևելյան շքամուտքը, շքամուտքի առջևի սալահատակը և դեպի դամբարանը իջնող վեց աստիճաններից բացկացած մուտքը (նկ. 8, 9): Այս պեղումների էական արդյունքներից մեկն էլ մակերեսից 3 մ խորության վրա պատերը շրջանցող գետնախարսխի հայտնաբերումն էր, ինչը հնարավոր դարձրեց հաավաստել, որ դամբարանը եղել է ոչ թե ստորգետնյա, այլ կիսագետենափոր: Այդ մասին մինչև պեղումները հուշում էին նաև բեմի տակի հատվածի հարավային աստիճանավանդակի վերևում և սրահի արևմտյան պատում եղած լուսամուտների բացվածքները, որոնք այժմ փակված են: Կառույցը պեղումներով բացված արևելյան մուտքի առաջին աստիճանի մարկարդակից ներքև գտնվել է գետնի տակ, իսկ դրանից վերև գետնից վերև: Պեղումներով հայտնաբերված հարյուրից ավելի վաղմիջնադարյան կղմինդրի բեկորները վկայում են, որ կառույցի տանիքը եղել է կղմինդրապատ:

Տիգրանակերտի և Ամարասի դամբարան-մատուռների շարքին կարելի է դասել և Արցախի մեկ այլ՝ Սուրբ Ստեփանոսի երկհարկ մատուռ-դամբարանը (պատմական Վաճառ բնակավայրում), որն ունի միակ արևելյան մուտք (նկ. 10): Այն ուշագրավ է նաև նրանով, որ մասունքների համար հատուկ բաժանմունք է ունեցել արևմտյան պատին կից առանձնացված հատվածում: Հուսով ենք, որ այս վերջինիս պեղումները նոր մանրամասներ կբացահայտնեն. ի մասնավորի՝ մուտքի և վերգետնյա կառույցի առումով (վերջինիս հետքեր տեղում դեռ դիտելի են): Այսպիսով, եթե Տիգրանակերտի դամբարանն ուղղակի ներառված է եկեղեցու ավագ խորանի տակ, ապա Գրիգորիսի մատուռը կարծեք փորձում է համադրել դամբարանն ու մատուռը. այն ստորգետնյա հատվածի հետ միասին ունեցել է նաև լուսամուտներով պսակվող վերգետնյա հատված, բավականին ընդարձակ սրահ, ինչը ենթադրելի է դարձնում ծիսական արարողությունների հավանականությունը հենց դամբարանում: Վաճառի դեպքում մենք արդեն գործ ունենք երկհարկ կառույցի հետ. ընդ-որում երկրորդ հարկը առկա տվյալներով եղել է ռոտոնդայի տիպի՝ այսինքն որոշակիորեն բաց: Նման բազմազանությունը հիմք է տալիս ենթադրել, ճարտարապետներն ու շինարարները ըստ էության փորձում էին գտնել թաղման կառույցի և ծիսական տարածքի փոխհարաբերության ավելի հարմար ձևեր, ինչը նաև կարող է նման կառույցների ժամանակագրության մասին խոսել՝ Տիգրանակերտ, Ամարաս, ապա Վաճառ: Գրիգորիսի մատուռի թվագրությունը 5-րդ դարի վերջերով թվում է որևէ կասկած չի հարուցում: Որոշակիորեն հստակեցված պատմական կոնտեքստից զատ այդ մասին կարող են վկայել նաև քանդակները: Տիգրանակերտի դամբարանը նախորդել է փոքր եկեղեցուն, որն էլ նախորդել է մեծ եկեղեցուն: Վերջերս մենք ստացել ենք նաև փոքր եկեղեցուն արևմուտքից կից տապանաբակի երկու թաղումների ոսկորների կարբոնային անալիզի տվյալները. սարկոֆագ՝ 420-565 թվականներ, սալարկղ՝ 566-655 թվականներ[1], ընդ-որում պիտի նկատի ունենալ, որ թաղումները կատարվել են, երբ եկեղեցին արդեն կառուցված էր՝ քանի որ դրանք անմիջապես հպվել են նրա արևմտյան պատին: Հատկապես կարևոր է առաջին անալիզի տվյալները, ըստ որոնց առաջին սարկոֆագում թաղումը կատարվել է 420 թվականից հետո, բայց ոչ ուշ քան 565 թվականը: Այնպես որ Տիգրանակերտի դամբարանի կառուցումը 5-րդ դարի երկրորդ կեսում և ամենուշը 6-րդ դարի սկզբներին՝ նկատի ունենալով նաև երկու եկեղեցիների ծավալա-տարածական, շինարարական ու մեծ բազիլիկի քանդակային հորինվածքները, կասկած չի հարուցում: Սրան կարելի է հավելել և մեծ բազիլիկում գտնված կավե սկավառակի արձանագրությունը, որին կանդրադառնանք քիչ հետո:

Առայժմ կարելի է խոսել երեք դամբարանների մասին, որոնց ծավալային լուծման առանձնահատուկ կողմը դրանց արևելյան մուտքն է:[2] Վաղքրիստոնեական Արևելքում մեզ, ցավոք, արևելյան մուտքով դամբարաններ

[1] Այս անալիզների համար ես երախտապարտ եմ արշավախմբի մարդաբան Պոլ Բեյլիին, հայագետ Պատրիկ Տոնապետյանին և արվեստաբան Աննա Էյլոյանին՝ իրենց մասնագիտական, ընկերական և ֆինանսական աջակցության համար:

[2] Նկատենք, որ արևելյան մուտքն ամենևին էլ չի նշանակել քրիստոնեության մեջ ընդունված արևմուտք-արևելք գաղափարա-ծիսական ուղղության դոմինանտի անտեսում: Այդ մասին վկայում են ինչպես Գրիգորիսի մատուռի ծավալա-տարածական լուծումը, այնպես էլ Տիգրանակերտի դամբարանի խորշերի կառուցվածքը, որոնց ներքին արևելյան ծավալներն ունեն ընդգծված կորացումներ՝ այսինքն սրբերի մասունքներին երկրպագելու ուղղվածությունը եղել է արևմուտքից-արևելք:
Արևելյան մուտք է վերագրվել նաև Աղվանքի որոշ վաղ եկեղեցիների: Օրինակ, ադրբեջանցի հնագետ Ռ. Վահիդովը, ենթադրել է որ արևելյան մուտք է ունեցել Մինգեչաուրի ամենավաղ եկեղեցին (4-5-րդ դարեր): Քանի որ կառույցի երեք պահպանված պատերի մեջ մուտք չկա, իսկ արևելյան աբսիդը չի պահպանվել, նա եզրակացրել է, որ մուտքը հավանաբար եղել է արևելքից (Ваидив Р. М. Мингечаур в 3-8 веках, Баку, 1966, с. 95-97): Ռ. Գեուշևը ենթադրել է, որ տվյալ դեպքում բեմը եղելէ կառույցի կենտրոնում, իսկ մուտքն՝ արևելքում (Геюшев Р. Б.,

հայտնի չեն: Նման ծավալա-տարածական լուծում չեն երևան բերում նաև Հայաստանի այլ վայրերից հայտնի դամբարանները (Աղցք, Հռիփսիմե, Գայանե, Թալին, Օշական, Նախճավան ևն): Միակ դամբարանը, որն ունի արևելյան մուտք՝ Տիրոջ գերեզմանն է Երուսաղեմում (Wilkinson, John. The Church of the Holy Sepulchre // Archaeology, Vol. 31, No. 4 (July/August), 1978, pp. 6-13): Մեր նախնական վարկածն այս առումով այն է, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք կոնկրետ կրոնական մի բարեփոխման (ռեֆորմի) հետ, որը փորձել է վարչա-քաղաքական նպատակներով առանձնահատուկ՝ Հայ եկեղեցուց տարբերվող ծագումնաբանական և դրանից բխող դավանական ու ծիսական կերպար հաղորդել Աղվանից եկեղեցուն: Այս առումով արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում Աղվանից արքա Վաչագան Բարպաշտի կողմից հինգերորդ դարի վերջին քառորդում կամ վեցերորդ դարի սկզբում իրականացված եկեղեցական բարեփոխումը, որի արդյունքում նոր կանոնակարգ մշակվեց Աղվանից եկեղեցու համար: Ընդ-որում դրա տակ կարելիէ հասկանալ գուցե և ավելի մեծ ժամանակամիջոց, քան Վաչագանի թագավորության տարիներն են՝ ասենք 5-րդ դարի երկրորդ կեսից մինչև 6-րդ դարի կեսերը: Այս տեսակետից հարկ ենք համարում հատուկ ուշադրություն դարձնել հենց Վաչագան Բարեպաշտի բարեփոխումների և դրանց հետ կապվող երկու թեմաների՝ Աղվանքի որպես արևելյան երկրի և Եղիշայի վարքաբանության վրա:

Առաջինը դա հենց Վաչագանին վերագրվող կրոնական ռեֆորմն է, նրա հատկապես այն միջոցառումները, որոնք ուղղված էին Աղվանից եկեղեցու սրբադասության ընթացակարգի սահմանմանը (պատմական հիմք, պաշտամունք-պահեցողություն, երազ-տեսիլք, լույսի հրաշալի ծագում-ցուցում, անուշահատություն, արդեն հայտնաբերված նշխարների օգտագործում, նշխարների հայտնաբերում և բաժանում), անվանացանկի հստակեցմանը (Զաքարիա, Պանդալեոն, Գրիգորիս, Գրիգոր, Հռիփսիմե, Գայանե), և ի վերջո՝ մասունքներն ամփոփող մատուռ-դամբարանների կառուցմանը (Գրիգորիսինը՝ Ամարասում, Պանդալեոնինը՝ Դյուտականում, Եղիշայինը՝ Ջրվշտիկում): Ընդ-որում, հին եկեղեցիները պաշտամունքային նոր խթան են ստանում հենց այս վերահայտ մասունքների շնորհիվ (Կաղանկատուացի, էջ 56-88):

Աղվանքի որպես արևելյան երկրի (ընդ-որում մի շարք կոնտեքստներում էլ որպես հենց դրանով Հայաստանից տարբերվող) գաղափարաբանությունը, որը վկայված ենք տեսնում ինչպես Վաչագանի պատմությունում (Կաղանկատուացի, էջ 56-88), այնպես էլ հետագայում, ուղղակի կապ ունի հենց Երուսաղեմի՝ որպես քրիստոնեական աշխարհի կենտրոնի և փրկագործության գաղափարի հետ: Սրա հետ կարծեք համահունչ է Աղվանից եկեղեցու ծագումը Երուսաղեմից բխեցնելուն ուղղված Եղիշա առաքյալի վարքաբանությունը, որն ըստ այդ պատմության համապատասխան հատվածի՝ Աղվանք եկավ հատուկ շրջանցելով Հայաստանը (Կաղանկատուացի, էջ 10-11):

Այսպիսով, մենք ունենք 5-6-րդ դարերի սահմանագծում Տիրոջ գերեզմանի ուղղությանը համապատասխանեցված դամբարանային կառույցներ, երկիրը արևելյան համարող գաղափարաբանություն, եկեղեցուն երուսաղեմյան ծագում վերագրող լեգենդ: Եվ ունենք մի հզոր տիրակալ, ով փորձել է կրոնական ռեֆորմների միջոցով իր թագավարության եկեղեցուն հաղորդել անկախ կարգավիճակ:

Ալեքսան Հակոբյանն իր վաղ քննություններում Վաչագանի պատմությունը (ներառյալ և «Աղվենի կանոնները» համարում էր «ծրագրային լեգենդ»՝ ստեղծված 6-րդ դարի կեսերին և դրանով իսկ կասկածի տակ էր առնում նրա պատմականությունը (Акопян А. А. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, Изд-во АН АрмССР, 1987, с. 186-187): Նորագյուտ դամբարանների և պատմական տվյալների համադիր մեր քննությունը կարծեք թե ցուցում է, որ այս մոտեցումներն ու պատկերացումները շատ ավելի վաղ են ձևավորվել:[1] Մեր կարծիքով հենց հզոր արքան է, որ պիտի փորձեր երկրի եկեղեցուն իր թագավարությանը պատշաճող ինքուրույնություն հաղորդել, գործընթաց, որը կարող էր ավելի հստակեցվել ու վերջնական տեսքի բերվել հետագա դարերում:[2] Վաչագանի ռեֆորմը փորձում էր համաքրիստոնեական, հայ-քրիստոնեական ավանդույթների կողքին ձևավորել նաև սեփական ավանդույթները (Արևելյան երկիր, Երուսաղեմյան առաքյալ, «սեփական» սրբեր): Եվ դրա նյութականացված, մեզ հասած արտահայտություններից մեկն էլ մեր կարծիքով արևելյան մուտքով մատուռ-դամբարաններն են:

Христианство в Кавказский Албании, Бакы, Элм, 1964, с. 83): Ըստ Ռ. Գեուշևի արևելյան մուտք է ունեցել և Եղիշեի նախնական տաճարը (էջ 83):

[1] Իր վերջին հրապարակումներում Ա. Հակոբյանը «Վաչագանի վեպը» վերագրում է 6-րդ դարի ամենասկզբին («Աղուանից թագաւոր Վաչագան II-ի «Բարեպաշտ» կերպարի կերտումը «Վաչագանի վէպ»-ում (VI դարի սկիզբ)», ձեռագրի իրավունքով): Անկախ, թե ինչ չափով են հետազոտողներն այն համարում իրական դեպքերի արտացոլում, չենք կարող չընդունել, որ այս պատմությունը ստեղծելուց առաջ Արցախում և Ուտիքում սրբերին նվիրված մատուռ-դամբարաններն արդեն պիտի կայացված փաստ լինեին, որպեսզի ներկայացվեին որպես եկեղեցական բարեփոխման արդյունք: Նույնանման իրավիճակ մենք ունենք, օրինակ, Գրիգոր Լուսավորչի դեպքում, երբ արդեն գոյություն ունեցող կոթողները 5-րդ դարի կեսերին ներկայացվել են որպես Լուսավորչի տեսիլքի հետևանքով՝ այսինքն՝ 4-րդ դարի սկզբում ստեղծված կառույցներ (Պետրոսյան Հ. Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, Փրինթինֆո, 2008, էջ 10-18):

[2] Կաղանկատվացու պատմությունը Եղիշայի գործունեության հիմնական տարածք դիտում Կուրի ձախափնյակը: Սրան համապատասխանում է և հետսագույն ավանդույթը՝ ընդհուպ մինչև 19-րդ դար: Վաչագանը թերևս փորձել է այդ ավանդույթի որոշ դրսևորումներ տեղափոխել աջափնյակ (Եղիշա առաքյալի անունով երկու վանքերի հիմնում Արցախում՝ Ամարասի հարևանությամբ և Մեծ Կվենքում: Վերջին վանքում՝ Եղիշա առաքյալ կամ Ջրվշտիկ վանք, ըստ ավանդության թաղվել է և Վաչագանը. այստեղ պահպանվել են նրա անունով հետսագույն՝ 10-11-րդ դարերի դամբարանը, տապանաքարը և խաչքարը):

Այս տեսակետից ուշագրավ են նաև Եղիշայի նահատակության վայրում Վաչագան Բարեպաշտի կողմից հուշասյան կանգնեցումը[1], սրբի մասունքների տեղափոխումը Արցախի Ջրվշտիկ (հետագայում՝ Եղիշա առաքյալի) վանք (Կաղանկատուացի, էջ 12), Վաչագանին վերագրվող հետսագույն դամբարանի, տապանաքարի և խաչքարի առկայությունը նույն վանքում: Նկատենք, որ նույն աղբյուրի հավաստի տեղեկություններով Գրիգորիսի մատուռը կառուցվել է հենց Վաչագան Բարեպաշտի անմիջական նախաձեռնությամբ և մասնակցությամբ (Կաղնակատուացի, էջ 64-88):

Դառնալով Տիգրանակերտին, նշենք, որ քրիստոնեության առաջին դարերում մեծ դերակատարում ունեցած այս քաղաքը Վաչագանի հետ կապող կարևոր հանգամանքներից մեկն էլ մի յուրօրինակ գտածո է՝ պեղված քաղաքային եկեղեցում 2008 թվականին: Այն կավե փոքրիկ սկավառակ է, որի մի երեսին փորագրված է շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչ, մյուս երեսին՝ մորթենու գլխարկ կրող, բեխ-մորուքով տղամարդու դիմապատկեր (նկ. 11): Սկավառակն ունեցել է միջանցիկ երկու անցքեր, որոնց օգնությամբ կապվել է ինչ-որ փաթույթի կամ տուփի և յուրօրինակ «դրոշմակնիքի» դեր է կատարել: Սկավառակի վրա փորագրված են հայերեն արձանագրություններ, որոնցից հիմնականը հայտնում է «ԵՍ/ ՎԱՉ[Է] (կամ ՎԱՉ[ԱԳԱՆ]) / ԾԱՌԱՅ Տ[ԵԱՌ]Ն»:

Սկավառակը գտնելու հանգամանքների, պատկերագրության և հայերեն տառատեսակների քննությունը թույլ է տալիս այն վերագրել 5-7-րդ դարերին: Վաչե և Վաչագան անձնանունները նշյալ ժամանակ կրել են մի քանի անձինք: Նրանց շարքում հատկապես առանձնանում է Վաչագան Բարեպաշտ արքան, որն ըստ նրա մասին ստեղծված զրույցի՝ հրավիրել է Աղվենի եկեղեցական ժողովը և մեծ ժամանակ է հատկացրել սրբերի մասունքների հավաքմանը. հանգամանքներ, որոնք կարող են համահունչ լինել մեր սկավառակի գործառույթի և արձանագրության թեմայի հետ: Այժմ նկատի ունենալով նաև վաղքրիստոնեական դամբարանաի հայտնաբերումը, որտեղ հատուկ նիշաներ են եղել՝ հատկացված սրբերի մասունքներին, կարող ենք հավանական համարել, որ նման «դրոշմակնիքով» կարող էին կնքվել սրբերի մասունքների պահարանները:

Տիգրանակերտի այս գտածոն փաստորեն Արցախի տարածքում հայտնաբերված ամենահին հայերեն արձանագրություններից մեկն է, և լավագույն փաստարկն է Խաչենագետի ներքնահովտի վաղքրիստոնեական-հայկական դիմագծի, որը պատմական մի շարք այլ սկզբնաղբյուրների տվյալներով ուրվագծվում էր և մինչև այս գյուտը:

Հատուկ շեշտելի է նաև քաղաքային եկեղեցու պեղումներից գտնված ապակյա սրվակը (նկ. 12): Ինչպես գիտենք, Գրիգորիսի նշխարների հայտնաբերման պատմությունը հատուկ շեշտում է ապակյա երկու սրվակների գյուտը, որոնցում պահվում էին սուրբ Զաքարիայի և Պանդալեոնի արյունները (Կաղանկատուացի, էջ 81): Մուգ կապույտ ապակուց պատրաստված ամֆորեսկի տեսք ունեցող մեր սրվակը վերաբերում է 5-7-րդ դարերին, և պակաս հավանական չէ, որ նույնպես ծառայել է նման նպատակների:

Ժողովրդական ավանդությունը, որ մեզ է հասել 19-րդ դարի գրառումներով, Վաչագան Բարեպաշտի անվան հետ է կապում և Վանքասարի եկեղեցին. «ժողովրդական աւանդութիւնը… Թառնագիւրտին անուանում է Թառնագիւտ և յարակցում, որ Վաչագան Աղուանից թագաւորը իւր վերջին տարիներում եկաւ Շահբուլաղ: Այնտեղ լերան գագաթին մի վանք շինեց, ուր և ճգնում էր կամ որպէս հաւ՝ թառում էր՝ Թառնագիւրտ» (Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, Երևան, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2010, էջ 39):

Իմ այս քննությունը ես համարում եմ հարցադրում և հիպոթեզ: Դեռևս շատ են լուծում պահանջող խնդիրները: Բայց մի բան ակնհայտ է՝ 5-րդ դարի վերջերից մենք արդեն ունենք արևելյան մուտքով դամբարաններ: Գլոբալ այս փոփոխությունը չէր կարող երևան գալ առանց համապատասխան քաղաքական-վարչական և գաղափարական-ծիսական հիմքերի: Մնում է հուսալ, որ մեղ կհաջողվի հանգամանորեն հետազոտել Վաճառի սուրբ Ստեփանոսի դամբարանը, քայլեր ձեռնարկել Դյուտականի հնագիտական տեղայնացման և Պանդալոնեի մատուռի հայտնաբերման ու հետազոտման ուղղությամբ: Կան նաև այլ հուշարձաններ, որոնք այս տեսակետից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում (Հոռեկա վանքի գլխավոր եկեղեցին, Եղիշա կույսի վանքի եկեղեցին, Եղիշա առաքյալի վանքի Վաչագան բարեպաշտին վերագրվող դամբարանը և այլն): Ցավոք հայագիտության այս կարևոր բնագավառը, ինչպես շատ այլ բնագավառներ, գտնվում է բացառապես անհատների ջանքերի և պատասխանատվության, բայց ոչ պետության գիտական քաղաքականության ոլորտում:

[1] Ինչպես նշեցինք, հուշասյան մնացորդներ են հայտնաբերվել նաև Տիգրանակերտում՝ առաջին եկեղեցու հարավային բակում:



Նկ. 1 Տիգրանակերտի վաղքրիստոնեական հրապարակի հատակագիծը, 2014 թ.:



Նկ. 2 Տիգրանակերտի վաղքրիստոնեական հրապարակը, 2016 թ., լուսանկարը՝ Հրայր Բազեի:

Նկ. 3. Տիգրանակերտի առաջին (քաղաքային) եկեղեցին:

Նկ. 4. Տիգրանակերտի երկրորդ եկեղեցին և նրան կից արևելյան տապանաբակը, 2014 թ.:

Նկ. 5 Տիգրանակարետի վաղքրիստոնեական դամբարանը:



Նկ. 6 Տիգրանակերտի վաղքրիստոնեական դամբարանի հատակագիծը:



Նկ. 7 Տիգրանակերտի վաղքրիստոնեական դամբարանի հատակագիծն ու կտրվածքները:

Նկ. 8 Ամարասի Գրիգորիսի մատուռի արևելյան մուտքը:



Նկ. 9. Ամարասի Գրիգորիսի մատուռի հատակագիծը պեղումներից հետո:

Նկ. 10 Սուրբ Ստեփանոսի դամբարանը Վաճառում:

Նկ. 11 Արձանագրակիր կավե սկավառակ, Տիգրանակերտ, 2008 թ. պեղումներ:

Նկ. 12. Ապակյա սրվակի բեկոր, Տիգրանակերտ, 2007 թ. պեղումներ:

УДК 941(479.243) -057.8 *История*

Владимир Пономарёв,
к.и.н., доцент кафедры гуманитарного образования
и иностранных языков.
Юргинский технологический институт (филиал)
Национального исследовательского Томского политехнического университета
E-mail: PWA13@mail.ru

СЛАВНЫЙ БОЕВОЙ ПУТЬ ВЫДАЮЩЕГОСЯ НАРОДНОГО ПОЛКОВОДЦА ИЗ АРЦАХА: ОТ РЯДОВОГО ДО МАРШАЛА

Статья посвящена военной биографии маршала, дважды героя СССР Ивана Баграмяна, в особенности ее досоветского периода. В судьбоносное для армянства время 17-летний Иван пошел на службу в русскую армию, с уверенностью, что с помощью русского оружия можно будет освободить Западную Армению. После расформирования Кавказского фронта он вошел в ряды армянского корпуса и был одним из офицеров Андраника. Участвовал в Сардарапатской битве, в результате которой Армения восстановила независимость. Несколько лет спустя Баграмян вошел в ряды Красной армии, участвовал в гражданской и в Великой Отечественной войнах, был командующим фронта. После войны занимал важные армейские посты. Герой из Арцаха занимает выдающееся место в числе великих военачальников Советского Союза.

Ключевые слова: Арцах, Баграмян, война, полководец, Сардарапат.

Vladimir Ponomarev,
PhD in History, Associate Professor, Department of Humanities and Foreign Languages,
Yurga Institute of Technology, TPU Affiliate

PATH OF GLORY OF ARTSAKH NATIONAL HERO: FROM PRIVATE SOLDIER TO MARSHAL

The article presents the biography of the twice hero of USSR Hovanes Baghramyan, namely its pre-Soviet period. In this fatal period for the Armenians the 17-year-old Ivan joined the Russian army with the conviction to liberate Western Armenian with the Russian help. Following the dissolution of the Caucasian front Baghramyan has joined the Armenian detachments and was one of Andranik's officers. He participated in the Sardarapat battle as a result of which Armenian got independence. Some years after